



Կալիֆոռնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ
**Խտրականության տեղեկագիր Թեստավորման
և արտոնագրման հնարավորություններ**

Սեպտեմբեր 2019թ., հրատ. #7145.10

Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների իրավունքների պաշտպանության մասին օրենքը և մյուս նահանգային ու դաշնային օրենքներն արգելում են հաշմանդամությամբ պայմանավորված խտրականություն որևէ պետական, նահանգային կամ տեղական իշխանությունների կառույցի կողմից, որոնք առաջարկում են դիմումների ստուգումները, արտոնագրումը կամ մասնագիտական հավաստագրումը: Սա նշանակում է, որ նման քննություններ կատարող կառույցները պետք է ապահովեն հավասար պայմաններ հաշմանդամություն ունեցող անձանց համար և տրամադրեն համապատասխան հարմարություններ: Այս պահանջները կիրառելի են բուհերի ընդունելության քննությունների համար, ինչպես օրինակ SAT, MCAT կամ GRE, ինչպես նաև մասնագիտական արտոնագրման քննությունների, ինչպես օրինակ Կալիֆոռնիայի փաստաբանների քննությունը:

Թեստավորման հարմարությունը ներառում է քննության միջավայրի արտաքին փոփոխությունները, ինչպես նաև օժանդակ միջոցներ և ծառայություններ, ինչպես օրինակ Բրայելյան կամ մեծ տառաչառվ քննական գրքեր, էկրանից կարդացող ծրագրաշարեր կամ ամերիկյան ժեստերի լեզվի թարգմանիչներ: Թեստավորման հարմարությունների այլ օրինակները ներառում են քննության համար լրացուցիչ ժամանակ, սնունդ կամ դեղորայք քննության ժամանակ կամ ստուգման անաղմուկ սենյակներ: Նպատակն է ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձը քննության ժամանակ հնարավորություն ունենա ցույց տալ իր իրական ընդունակությունները կամ ձեռքբերումների մակարդակը, քան այն, որ նա հաշմանդամության խնդիր ունի: Ամեն դեպքում, ստուգման ծառայություն տրամադրողներից չի պահանջվում հաստատել

Թեստավորման հարմարությունները, որոնք հիմնովին կփոխեն քննության եղությունը կամ կաջակցեն որևէ հմտությամբ, որն անհրաժեշտ է ստուգել քննության ժամանակ:

Թեստավորման հարմարությունների մասին լրացուցիչ տեղեկությունները կարող եք գտնել այստեղ՝

ԱՄՆ-ի Արդարադատության վարչության կայքէջ՝

- Թեստավորման և արտոնագրման տեղեկագիր՝ https://www.ada.gov/regs2014/testing_accommodations.html
- ՄԻԱՎ/ՁԻԱՅ ունեցող անձանց իրավունքների մասին մասնագիտական վերապատրաստման և նահանգային արտոնագրման տեղեկություններ ստանալու համար՝ https://www.ada.gov/qahivaid_license.pdf

Աշխատանքի տեղավորման ցանցի կայքէջ՝

- Առկա հնարավորությունների մասին տեղեկություններ՝ <https://askjan.org/topics/test.cfm>

Թեստավորման և արտոնագրման հարմարությունների ձեռքբերում

Թեստավորման կամ արտոնագրման քննության կամ դիմումի ժամանակ պետք է ձեռնարկել հետևյալ քայլերը հարմարություններն ստանալու համար.

1. հարմարությունների տրամադրման համար գրել խնդրանք-հարցում: Ձեր խնդրանքը պետք է բացատրի հետևյալը.
 - Որ Դուք հաշմանդամ անձ եք (կարիք չկա, որ Դուք բացահայտեք Ձեր հաշմանդամության տեսակը).
 - այն, որի շնորհիվ Ձեր հաշմանդամությունն ազդում է քննությունն անցկացնելու Ձեր կարողության վրա,
 - Ձեզ անհրաժեշտ թեստավորման առանձնահատուկ հարմարություններ (ձևափոխություններ/օժանդակ միջոցներ և ծառայություններ) և
 - այն ամսաթիվը, երբ պատասխան եք ակնկալում:

2. Ստացեք փաստաթղթեր, որոնք կաջակցեն հարմարությունների ստացման Ձեր կարիքը: Փաստաթղթերը կարող են լինել.

- փաստաթղթեր, որոնցում նշված է, որ նմանատիպ քննությունների իրավիճակներում Ձեզ տրամադրվել են հարմարություններ Կամ
- օժանդակ նամակ Ձեր բժշկից կամ բուժող այլ անձնակազմից: Նամակում պետք է բացատրվի, թե ինչու Դուք հայցված հարմարեցման/փոփոխության կարիքն ունեք Ձեր հաշմանդամության պատճառով:

3. Ուղարկեք Ձեր գրավոր հարցումը և օժանդակ փաստաթղթերը թեստը տրամադրողին:

Պատշաճ հարմարեցումներ, փոփոխություններ խնդրելու նամակի նմուշը և աջակցող նամակի նմուշն առկա են այս ամփոփաթերթի վերջում: Կարող եք նաև օգտագործել թեստավորող կամ արտոնագրող գործակալության տրամադրած ձևաթղթերը:

Թեստավորող և արտոնագրող գործակալությունները պետք է ժամանակին պատասխանեն հարմարությունների ստացմանը վերաբերող հարցումներին: Այդ գործակալությունները կարող են խնդրել լրացուցիչ տեղեկություններ հարմարությունների ստացման կարիքի վերաբերյալ, սակայն նման հարցումները պետք է խելամիտ լինեն՝ սահմանափակվելով միայն պահանջվող թեստավորման հարմարությունների կարիքի մասին հարցմամբ: Եթե թեստավորող և արտոնագրող գործակալությունը Ձեզ խնդրում է տրամադրել ավելի շատ տեղեկություն, քան անհրաժեշտ է պահանջվող հարմարությունը որոշելու համար, կարիք չկա տրամադրել այդ տեղեկությունը:

Վարչական բողոքներ

Պետական կազմակերպություններ:

Եթե կարծում եք, որ նահանգային կամ տեղական պետական մարմինների կողմից խտրական վերաբերմունքի եք արժանացել, ապա կարող եք ներկայացնել վարչական բողոք ԱՄՆ-ի Արդարադատության վարչության (DOJ, Department of Justice) միջոցով դաշնային կամ DFEH-ի (Արդար զբաղվածության և կացարանային պայմանների հարցերով զբաղվող վարչություն) միջոցով նահանգային օրենքի շրջանակում: Բողոքները պետք է ներկայացվեն DOJ-ին խտրական վարքագծից հետո

180 օրվա ընթացքում: Բողոքները պետք է ներկայացվեն DFEH-ին խտրական վարքագծից հետո մեկ տարվա ընթացքում: DOJ-ի և DFEH-ի կոնտակտային տվյալները ներկայացված են ստորև:

Մասնավոր կառույցներ.

Եթե կարծում եք, որ Ձեր հանդեպ խտրական վերաբերմունք է դրսևորվել թեստավորման մասնավոր ընկերության կողմից, կարող եք վարչական բողոք ներկայացնել DOJ-ին հաշմանդամություն ունեցող ամերիկացիների իրավունքների պաշտպանության մասին օրենքի (ADA) III-րդ գլխի շրջանակում կամ DFEH-ին՝ սահանգային օրենքի շրջանակներում: DFEH-ի բողոքները պետք է ներկայացվեն խտրական վերաբերմունքի կատարման ամսաթվից սկսած մեկ տարվա ընթացքում: Դուք կարող եք բողոքարկել DFEH-ի՝ սախագահին՝ DFEH-ի որոշումը՝ որոշումն ընդունելուց հետո 10 օրվա ընթացքում: Տե՛ս՝ 2 C.F.R. Հոդված 10033.

III վերնագրի բողոքները կարող են ցանկացած պահի ներկայացվել DOJ: Սակայն լավագույն ձևը հնարավորինս շուտ ներկայացնելն է, որովհետև ժամանակահատվածը կարող է դժվարացնել խտրականության հաստատումը: DOJ-ի և DFEH-ի կոնտակտային տվյալները ներկայացված են ստորև:

DOJ-ի և DFEH-ի կոնտակտային տվյալները ստորև են՝

DOJ բողոքներ:

U.S. Department of Justice
Civil Rights Division
950 Pennsylvania Avenue, N.W.
Disability Rights Section – 1425 NYAV
Washington, D.C. 20530

Առցանց ներկայացում՝ https://www.ada.gov/filing_complaint.htm

Հեռախոս՝ (800) 514-0301
Հեռատիպ՝ (800) 514-0383

DFEH բողոքներ՝

Առցանց ներկայացում՝ <https://www.dfeh.ca.gov/filing-a-complaint-online/>

Յեռախոս՝ (800) 884-1684

Յեռատիպ՝ (800) 700-2320

Փոստային հասցե՝ Չանգահարեք (800) 884-1684 հեռախոսահամարով և բողոքի համապատասխան ձևաթուղթ խնդրեք՝ տպելու և վերադարձնելու համար: Խնդրում ենք փոստային առաքման և մշակման համար ժամանակ տալ:

Դատավարություն

Օրենքի խախտման վերոնշյալ քննարկված դեպքերը նաև կարող են քննվել մասնավոր դատական գործի հարուցման միջոցով: Խնդրում ենք տեղյակ լինել, որ սահմանափակումներին վերաբերող օրենսդրական ակտերը սահմանափակում են դատավարություն ներկայացնելու ժամկետը, և որ Դուք կարող եք հավանաբար կորցնել գանգատարկման իրավունքը, եթե սահմանափակումներին վերաբերող կիրառելի օրենսդրական ակտերի շրջանակում չգործեք: Այս վերջնաժամկետները կարող են երկու տարուց կարճ լինել՝ սկսած խտրականության դրսևորման ամսաթվից:

Եթե Դուք 10000 ԱՄՆ դոլարից ավելի քիչ եք պահանջում վնասի դիմաց, մեկ այլ տարբերակ է Փոքր բողոքների դատարանում խտրականության մասին գործ հարուցելը: Սահմանափակումներին վերաբերող օրենսդրական ակտերը, որոնք քննարկվեցին վերևում, կիրառելի են: Եթե Դուք դիմեք Փոքր բողոքների դատարան, ապա չեք կարողանա օգտվել փաստաբանի ծառայություններից: Այստեղ հղում է տրված Disability Rights California-ի այն հրապարակմանը, որտեղ բացատրվում է խտրականության դեպքերի համար փոքր բողոքների օգտագործումը՝ <https://www.disabilityrightsca.org/publications/a-guide-to-small-claims-court-how-to-sue-if-a-business-or-landlord-discriminates>

Բացի այդ, կառավարության քաղաքացիական իրավախախտումների գանգատների մասին օրենքը պահանջում է, որ կառավարության քաղաքացիական իրավախախտումները ներկայացվեն խտրականության դեպքից հետո վեց ամսվա ընթացքում՝ նահանգային կամ տեղական պետական կազմակերպության դեմ դատական գործ հարուցելով՝ դրամական կորստի մասին: Իրավախախտման հայցերի մասին օրենքի առնչությամբ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել այստեղ՝ <https://www.disabilityrightsca.org/publications/tort-claims-filing-claims-against-public-entities-under-the-california-tort-claims-act>: Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս կայքէջը միացնում է հայցերի ներկայացման ձևաթուղթն ընդդեմ նահանգի կամ նահանգային

գործակալության կամ աշխատակցի, որը կարող է չկիրառվել Ձեր դեպքում: Այլ պետական կազմակերպությունները կարող են քաղաքացիական իրավախախտումների բողոքների վերաբերյալ իրենց սեփական ձևաթղթերն ունենալ, որոնք մատչելի են նրանց կայքէջերում: Եթե Դուք հետաքրքրված եք հետապնդման դատավարությամբ, պետք է հնարավորինս շուտ խորհրդակցեք փաստաբանի հետ:

Հարմարությունների հարցման նամակի նմուշ

[Ամսաթիվ]

Հարգելի [Թեստավորող ընկերություն/արտոնագրող կառույց],

Ես գրում եմ Ձեզ՝ պատշաճ հարմարեցումներ/փոփոխություններ խնդրելու իմ հաշմանդամության/հաշմանդամությունների համար।

Ես ծրագրում եմ հանձնել [քննության/թեստի անունը] [քննության/թեստի ամսաթիվը]-ին: Իմ հաշմանդամության պատճառով ես հետևյալ հարմարեցումների կարիքն ունեմ՝ [նշել հարմարեցումները]:

Իմ [բժիշկը/հոգեբույժը/հոգեբանը/թերապևտը/սոցիալական աշխատողը/աշխատանքային թերապևտը/այլ անձ (նկարագրել)] համարում է, որ այս հարմարեցումները/փոփոխություններն անհրաժեշտ են իմ հաշմանդամության պատճառով: Խնդրում եմ կից տեսնել [բժշկի նամակը կամ մասնագետի անունը/ թեստավորման հարմարությունների փաստաթուղթը]:

Դաշնային և նահանգային օրենքը պահանջում է, որ թեստավորող և արտոնագրող կառույցները հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրեն հարմարություններ, որոնց առկայության պայմաններում թեստը կամ քննությունը ճշգրտորեն կարտացոլեն անհատի հմտությունները կամ կարողությունները: Խնդրում եմ այս խնդրանքին պատասխանել մինչև [ամսաթիվ]: Խնդրում եմ դիմել ինձ [Ձեր հեռախոսահամարը և/կամ էլ.փոստի հասցեն] միջոցով, եթե Դուք որևէ հարց ունեք: Շնորհակալություն:

Հարգանքով՝

[Ձեր անունը]

[Ձեր հասցեն]

Աջակցող նամակի նմուշ

[Ամսաթիվ]

Հարգելի [[Թեստավորող ընկերություն/արտոնագրող կառույց],]:

Ես [Ձեր անունը]-ի բժիշկը/հոգեբույժը/հոգեբանը/թերապևտը/սոցիալական աշխատողը/աշխատանքային թերապևտն] եմ և ծանոթ եմ նրա առողջական խնդրին: [Նա] հաշմանդամություն ունի, ինչը որոշակի ֆունկցիոնալ սահմանափակումներ է ստեղծում: Այս սահմանափակումները ներառում են [նշեք ֆունկցիոնալ սահմանափակումները, որոնք հայցված հարմարեցումներն են պահանջում]:

[Պահանջվող հարմարեցում]-ն անհրաժեշտ է [Անուն]-ի կատարողականության համար [Թեստ կամ քննություն]-ին ճշգրտորեն արտացոլելու [Անուն]-ի ընդունակությունները և հմտությունները: [Նկարագրել, թե ինչպես են հարմարեցումներն աջակցելու կամ օգնելու անհատին]:

Շնորհակալ եմք, որ տրամադրեցիք այս [հարմարեցումը] [Անուն]-ի համար:

Հարգանքով՝

[Անուն և պաշտոն]

Վերջին անգամ թարմացվել է՝ 9 սեպտեմբերի, 2019թ

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Լրացնել հարցաշարը\]](#)

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության [խնդրանքի ձևաթուղթ](#): Մնացած բոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով (Հյուսիսային Կալիֆոռնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆոռնիա):

*Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից,
հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝*

[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).